ԱՇԽԵՆ ՅՈՒԶԲԱՇՅԱՆ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՏԴ 378:811.19

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանալի բառեր և արտահայտություններ. մասնագիտական միջոցառում, հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, շարահյուսություն, կենաց ծառ, հեքիաթ, ածանց, բառ, վերացարկված մտածողություն:

Ключевые слова и выражения: Профессиональное мероприятие, лексикология, фонетика, морфология, синтаксис, лингвистическое дерево, сказка, аффикс, слово, абстрактное мышление.

Key words and expressions: Academic activity, phonology, morphology, syntax, tree of life, fairy tale, prefix, suffix, word, abstract thinking.

Երրորդ հազարամյակում տեխնոլոգիաների արագ զարգացումը, հասարակական, քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները, անգամ ազգային, հայրենասիրական, ընտանեկան արժեքների վերարժևորումը թելադրում են մտածողության արդիականացում, ինչպես նաև կրթական ծրագրերի իրականացման համար այդ ամենի մատուցման, փոխանցման, ուսուցման արդյունավետ մեթոդների և միջոցների կիրառման հմտություններ:

Յուրաքանչյուր մասնագիտություն, բնականաբար, ունի իր առանձնահատկությունները: Մանկավարժի համար կարևոր են տեսական և պրակտիկ գիտելիքների համադրման կարողությունները: Այս տեսանկյունից մանկավարժական բուհում /բակալավր և մագիստրատուրա/ խիստ կարևորվում է ուսումնամասնագիտական պրակտիկան, որն անցկացվում է երկու շրջափուլով՝ ուսումնաճանաչողական և ակտիվ գործունեության շրջաններ, որոնցից յուրաքանչյուրն ունի երկու շրջափուլ: Ուսումնամասնագիտական պրակտիկան ոչ միայն նպաստում է մանկավարժի կերտմանը, այլև բացահայտում է մանկավարժի այն անհատական գծերը, որոնք կարող են նպաստել կամ մասնագետի կայացմանը, կամ էլ հակառակը: Դեռևս Հովհան Ոսկեբերանն էր այն համոզմունքին, թե <<Չկա ավելի բարձր արվեստ, քան դաստիարակելու արվեստը: Իմաստուն դաստիարակը կերտում է մի կերպար, որին նայելով՝ ցնծում են թե մարդիկ, թե Աստված>>: Ուսումնամասնագիտական

պրակտիկաները պետք է ուսանող- մանկավարժների մոտ մշակեն որոշ աշխատանքային հմտություններ, կարողանան բացահայտել ապագա մանկավարժների հոգեկերտվածքի անհարժեշտ կողմերը, ինչպես նաև ձեռք բերեն անհարժեշտ նախնական պրակտիկ գիտելիքները, որոնք կնպաստեն հետագայում ինքնուրույն աշխատանքի անցնելիս: Առհասարակ, մենք գտնում ենք, որ նպատակահարմար է դպրոցներում գոնե սկզբնական շրջանում մի որոշ ժամանակահատված աշխատել <<ուսուցչի օգնական>>, քանի որ մանկավարժի մասնագիտությունը պահանջում է բավական արհեստավարժություն, ոչ տեղին դիտողությունը, <<պատիժը>>, նույնիսկ <<հումորը>> կարող են հանգեցնել բավական վատ արդյունքների. չէ? որ երեխայի մտածողությունը, հոգեկերտվածքը պետք է ձևավորվի առողջ մթնոլորտում: Մասնագիտական պրակտիկայի ընթացքում ուսանողները դժվար խնդրի առջև են. տեսական գիտելիքները պրակտիկայում կիրառելիս նրանք առնչվում են այնպիսի իրողությունների, որոնց լուծումները պահանջում են `

1. մասնագիտական պատշաճ պատրաստվածություն,
2. ճկունություն և հարմարվողականություն,
3. հետաքրքրասիրություն և երևակայություն,
4. ուսուցման գործընթացը մոտիվացնելու կարողություններ,
5. աշակերտին հարգելու կարողություններ:

<<Հայոց լեզու և գրականություն>> առարկան հիմնական դպրոցում բաժանվում է երկու մասի`<<Մայրենի>> և <<Հայոց լեզու>>, <<Գրականություն>>[1]: Այս բաժանումը կատարելիս, իհարկե, ուշադրություն է դարձվել և տարիքային առանձնահատկություններին, և ուսուցանվող նյութին: Ուսումնամասնագիտական պրակտիկան հիմնականում անցկացվում է հիմնական դպրոցում և մեծ ուշադրություն պետք է դարձվի այս առարկաների յուրահատկություններին: Բնականաբար, պրակտիկայի ընթացքում դժվար է տարորոշել, թե որ առարկան է նախընտրելի դասավանդող ուսանողի համար՝ <<Մայրենին>>, թե՞ <<Հայոց լեզուն>>:

Սույն հոդվածում անդրադառնում ենք ուսումնաճանաչողական պրակտիկայի շրջափուլի որոշ առանձնահատկություններին: Վերոհիշյալ շրջափուլերում ուսանողները ծանոթանում են դպրոցին՝ իբրև

[1] Դ. Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Մայրենի 5, Եր., 2015, Մայրենի 6, Եր., 2016, Հ. Բարսեղյան, Փ. Մեյթիխանյան, Հայոց լեզու, 7, Եր., 2011:

հաստատություն, դպրոցում գործող կառույցներին, ենթակառույցներին, դրանց գործառույթներին[2]:

Ուսանողները կատարում են նաև դասադիտարկումներ, ընդ որում նաև այլ առարկաներից: Մեթոդիստի հետ կատարվում է վերլուծություններ: Այստեղ կարևոր է նրանց շփումը երեխաների հետ: Չնայած նրանք չեն դասավանդում, բայց երեխաների հետ պետք է շփվեն արտադասարանական միջոցառումների միջոցով: Այս միջոցառումները բովանդակային պլանում բաժանվում են երկու խմբի՝ այցեր տարբեր մշակութային վայրեր և, իհարկե, ստեղծագործական միջոցառումների կազմակերպում: Վերջինս, եթե ունենում է ճիշտ մոտիվացիա, ապա բավական հետաքրքիր արդյունք է տալիս:

Քննարկենք միջոցառման մեկ օրինակ <<Հայոց լեզվից>>, որն ընդգրկում է միջին դպրոցի բոլոր դասարանները:

Միջոցառման վերնագիրը՝ <<Հայոց լեզվի կենաց ծառը>>:

Միջոցառմանը ընդգրկված խմբերը՝

5-րդ դասարան

6-րդ դասարան

7-րդ դասարան

8-րդ դասարան

9-րդ դասարան

պրակտիկայի խմբի ուսանողներ

Միջոցառման բովանդակություն՝ այն ներառում է լեզվի բոլոր բաժինները՝ հնչյունաբանություն /5-րդ դասարան/, բառագիտություն/6-րդ դասարան/, ձևաբանություն/7-րդ դասարան/, շարահյուսություն/8-9-րդ դասարաններ/:

Մեթոդներ՝թիմային աշխատանք, զրույց, հարց ու պատասխան, քարտային աշխատանք, աղյուսակներ, լեզվական ծառ:

Նպատակը՝աշակերտների մոտ ամփոփել որոշ ժամանակահատվածի կտրվածքով լեզվական գիտելիքները, լեզվական գիտելիքների գործածությունը պրակտիկայում:

Ուսանողների մոտ մշակել թիմային աշխատանքներին մասնակցելու կարողություններ, աշակերտական խմբերի կառավարում, ստեղծագործական աշխատանքի մոտիվացիաներ:

Միջոցառումը կազմակերպվում է քայլերով.

---

[2] Ռ. Հարությունյան, Ս. Թորգոմյան, Ուղեցույց մանկավարժական պրակտիկայի/բանասիրական ֆակուլտետ, բակալավրիատ/, Եր., 2017:

Քայլ առաջին՝

Յուրաքանչյուր դասարանին կցվում է ուսանողների խումբ/2-3 ուսանող/, որոնք գրում են միջոցառման սյուժեի՝ իրենց համար նախատեսված հատվածը:

Քայլ երկրորդ՝

Համապատասխան դասարաններում հավաքագրում են այն երեխաներին, որոնք ուզում են մասնակցել միջոցառմանը: Այս փուլում շատ կարևոր է մեծ թվով երեխաների ընդգրկվածությունը, չպետք է տարորոշել լավ և վատ սովորող աշակերտներ, լավ արտասանող, ընթերցող աշակերտներ: Միջոցառման նպատակներից մեկն էլ այն է, որ երեխաների մոտ մշակվի արտահայտիչ կարդալու, ճիշտ շեշտադրությամբ խոսելու կարողություններ, որոնք <<Հայոց լեզու>>, <<Գրականություն>> առարկաների հիմնական պահանջներից մեկն են:

Քայլ երրորդ

Այս փուլում երեխաների և պրակտիկանտների ուժերով ստեղծվում է միջոցառման սյուժեն:

<<Կենաց ծառը>> պետք է <<տնկել>>, <<խնամել>>, <<բերք ստանալ>>:

Սյուժեն գրելիս ուսանողների մոտ զարգանում է դասավանդման ժամանակ ստեղծագործական, վերացարկված մտածողության, երևակայական կարողությունների մշակում, միջառարկայական կապերի առկայություն, օրինակ՝ կերպարվեստի, երաժշտության, պատմության, մաթեմատիկայի և այլն: Աշակերտները նույնպես մասնակցում են այս գործընթացին, որը նրանց մոտ զարգացնում է ամփոփ միտք կազմելու, շարադրելու, նաև ստեղծագործելու կարողություններ:

Ուսանողներին մենք բուհական դասընթացում սովորեցնում ենք, որ հայ իրականության մեջ 5-րդ դարում թարգմանվեց Դ. Թրակացու <<Արուեստ քերականութեան>> աշխատությունը, որով հիմք դրվեց համանուն գիտությանը: Գոյական խոսքի մասը այդ ժամանակից առ այսօր սահմանվում է <<առարկա ցույց տվող բառեր>>: Սակայն 21-րդ դարի ուսուցիչը պիտի կարողանա այս ճշմարտությունը նորովի ուսուցանել երեխային: Մենք կողմ ենք այն մոտեցմանը, որ դպրոցում ուսանողը պետք է երեխաների հետ կարողանա քերականական զրույց վարել: Սա հետաքրքիր և մյուս կողմից դժվար մեթոդ է: Ուսանող-ուսուցիչը պիտի փորձի առանց տերմինախեղդության բացատրել գոյական անունը՝ հիմնական ուշադրությունը բևեռելով հոլովման համակարգի, հոդերի ճիշտ կիրառությանը, թվակազմությանը:

Սկսվում է ստեղծագործական աշխատանքը: 5-րդ դասարանի նյութից ընտրվում է լեզվական նյութ՝հնչյուններ, նրանց տեսակները՝ ձայնավորներ և բաղաձայններ, նրանց ուղղագրության և ուղղախոսության առանձնահատկությունները: Մենք առաջարկում ենք հետևյալ լուծումները.

Կարելի է հորինել ինչ-որ հեքիաթ հնչյունների մասին՝ մասնակից դարձնելով նաև աշակերտներին, քանի որ նրանց երևակայությունն անեզր է: Հեքիաթը ներառված է 5-րդ դասարանի ծրագրում, բացի այդ հեքիաթը բանահյուսության այն ժանրերից, որ միշտ արդիական է, հետաքրքիր, ուսուցողական, ընդգրկված էթնոմանկավարժության մեջ: Բնականաբար աշխատում են ուսանողների և աշակերտների թիմը: Նախընտրելի է, որ ուսանողները նախօրոք կազմեն իրենց սյուժեն, սակայն աշակերտներն անպայման համալրեն իրենց աշխատանքներով:

6-րդ դասարանի նյութից կարելի անդրադառնալ բառակազմությանը՝ պարզ բառեր, ածանցավոր բառեր, բարդ բառեր:

Օրինակ՝ ուշադրություն դարձնել մեկ հնչյունից կազմված ածանցներին՝ ի, ու, ք, արմատ-ածանց համանուն խմբերին՝բաց-բաց,տար-տար,բան-բան, ու-ու, ունչ-ունչ:

7-րդ դասարանի քերականական նյութից կարելի է անդրադառնալ ձևաբանությանն առհասարակ, խոսքի մասերի քերականական կարգերին՝նայած ինչքան նյութ են անցել:

Նույնը վերաբերում է նաև 8, 9-րդ դասարանների քերականական նյութին՝ շարահյուսությանը, մասնավորապես նախադասությանը, տեսակներին, անդամներին, նրանց փոխհարաբերությանը:

Միջոցառումը նպաստում է անցած նյութի յուրացմանը, ամրապնդմանը, երեխաների մոտ առաջացնում է լեզվական պատկերավոր մտածողություն:

Քայլ չորրորդ

Սկսենք <<տնկել>> ծառը:

Ծառի արմատները համարենք պարզապես հայերենը՝ իր բավական հին ծագումով՝ Աստվածաշնչյան եզրույթով՝ <<Արարադի երկիր>>-ի լեզվով[3], հայկյան լեզու, հայերեն:

[3] Մենք միտումնավոր պարզեցնում ենք այս տեղեկույթը հայոց լեզվի ծագման մասին, այս մասին տես՝Ս. Ղազարյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 2006, էջ 25-34, Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն,նախագրային շրջան, Երևան 1987, էջ 7:

Ծառի բունը՝հայերենն է՝զարգացման երկու շրջանով՝ նախագրային և հետգրային, որի համար առանձնացնում են երեք շրջան՝ հին, միջին, նոր հայերեն: Վերջապես ծառի ճյուղերը լեզվական բաժիններն են, իսկ տերևները՝ այն մասնավոր հասկացությունները, որոնց անդրադառնում են երեխաները:

Միջոցառման ժամանակ ներկայացվում է պատկերավոր լեզվաբանություն, կատարվում են լեզվական զանազան աշխատանքներ, օրինակ՝ բառակազմական, ձևաբանական, շարահյուսական: Նմանատիպ միջոցառումների կազմակերպումը ապագա մանկավարժներին սովորեցնում է շատ կարևոր գործառույթ. ուսուցիչը տեղեկատվության, գիտելիքի փոխանցող չէ, նա նաև մտածողության, լեզվամտածողության կրողն է և մշակողը սովորողի մոտ:

Ուսանող-պրակտիկանտը, միջոցառում կազմակերպելով, սովորում է թիմում աշխատել և կառավարել աշակերտական խմբեր:

Քայլ հինգերորդ

Անդրադառնանք վերացարկված մտածողությանը: Ծառի աճելուն անհրաժեշտ է հող, ջուր, արև: Ինչ խորհրդանիշներով պատկերենք այս հասկացությունները. ծառը խոր արմատներ տալու համար անհրաժեշտ է հայրենի հող. այս պարագայում օգնության է գալիս հայ գրականությունը՝ հողի ուժի մասին պատմություններով՝Փ. Բուզանդ <<Արշակ և Շապուհ>>, ջուրը կարելի է բեմադրելով պարով, իսկ արևը՝ նկարով՝ այսպիսով ապահովելով միջառարկայական կապերի հետաքրքիր փունջ: Ինչպես օգտագործել SS: Իհարկե, այս պարագայում հնարավորությունները ավելի մեծ են, յուրաքանչյուր ուսուցիչ կարող է իր տարբերակը առաջարկել, ինչպես՝ սահիկահանդես՝միջոցառմանն ընդգրկված լեզվական նյութի մասին:

Մենք, հնարավորինս նկարագրեցինք քերականական միջոցառման մեկ օրինակ:

Քննարկենք այս միջոցառման դրական կողմերը:

Ուսանողները, կազմակերպելով այս միջոցառումը, սովորեցնում են երեխաներին վերլուծել քերականական նյութը, այսինքն երեխան ակամա մտածում է ձևաբանության և շարահյուսության կապի մասին, նրանց հաղորդակցական գործառույթի մասին: Քերականությունը մտնում է առտնին կենսակերպ, ինչպես ֆիզիկան և երկրաչափությունը:

Մյուս կողմից՝ միջոցառման ժամանակ երեխաները նկարում են, պարում, ասմունքում, ներկայացնում են թատերական հատվածներ, որոնք նպաստում են նրանց խոսքի զարգացմանը:

Ուսումնամասնագիտական պրակտիկայի ժամանակ խիստ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև նրանց աշխատանքային փաթեթների ստեղծման գործընթացին: Մի կողմ թողնելով այն ընդհանուր փաստաթղթերի ուսումնասիրությունները, որոնք նախատեսվում են ընդհանուր պլանով, պետք է ուշադրություն դարձնել նրանց մասնագիտական առանձնահատկություններին: Բնականաբար <<Հայոց լեզու և գրականություն>> առարկայի պրակտիկայի ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձնել ուսանողի մասնագիտական մտածողության ձևավորմանը:

Արդի ժամանակաշրջանում խիստ անհրաժեշտ են հետևյալ մոտեցումները. աշակերտակենտրոն մոտեցում, մասնագիտական նյութի մատչելի հաղորդում, SS-ների գործածություն, ուսանողը պետք է կարողանա իմացած գիտական նյութը փոխանցել, դարձնել ուրիշինը[4]: Շատ հաճախ բավական լավ գիտական պատրաստվածություն ունեցող ուսանողը չի կարողանում իր գիտելիքները մատուցել երեխաներին, և հակառակը: Այդ պատճառով պետք է հետևել ուսանող- պրակտիկանտի կրթության մասին ունեցած իր խոհերին, համեմատել փոփոխությունները, պահանջել իր վարժությունների համակարգի ստեղծումը, ստեղծագործական աշխատանքներ կատարել փաթեթում, անգամ լուսանկարներն ինքնանպատակ չպետք է լինեն: Ուսանողը ոչ միայն պետք է տեղադրի լուսանկարը, այլև վերլուծի, հիմնավորի, վերնագրի լուսանկարը, այսինքն ինքը կատարի ստեղծագործական աշխատանք:

Հայոց լեզվի դասավանդման ժամանակ ցանկալի է ուշադրություն դարձնել վերլուծական մտքի ձևավորմանը, ինչպես, օրինակ, հատկանիշ ցույց տվող խոսքի մասերի նման հատկանիշների վերլուծություն, որոնց հիման վրա առանձնացնել տարբերությունները.

օրինակ՝կարողանա համեմատել ածական-թվական-մակբայ խոսքի մասերը՝ չմոռանալով հարաբերակից դերանունները: Հավաքի բնագրային

[4] Мазилов В. А. Теоретический анализ компетенций образования, 2009, с. 15. Под руководством В.Д.Шадрикова была разработана «Модель специалиста с высшим профессиональным образованием», в соответствии с которой современный специалист должен уметь перевести получаемые знания в инновационные технологии, превращая новые знания в конкретные предложения;иметь мотивацию к обучению, на протяжение всей жизни, владеть навыками самостоятельного получения знаний и повышения квалификации (специалист должен «уметь учиться»); владеть методологическими знаниями и аналитическими навыками.

նյութեր, փաթեթում կարելի է զետեղել իր ինքնուրույն օրինակները: Մեծ ուշադրություն պետք է դարձնել գրադարանի ծանոթացմանը: Կարելի է հենց այդ ժամանակահատվածում կազմակերպել ընթերցանություններ, որոնց պակասը բավական զգալի է երեխաների շրջանում: <<Գրական ակումբները>> մեծամասամբ վերաբերում են մեծահասակներին, մինչդեռ երեխաներին կրթելու գործում շատ կարևոր է սովորեցնել գրական հերոսի վերլուծությունը դասից դուրս, միջին դասարաններում/8-9-րդ/ նույնիսկ թեյախմության ժամանակ: Կարևոր են նաև կինոդիտումները, ներկայացումների հաճախուները՝ նախօրոք սովորեցնելով պահելաձևի կանոնները, քննարկելով համապատասխան գրական նյութը: Կարծում ենք հայոց լեզվի և գրականության ուսուցչի <<բեռը>> մի փոքր ծանր է, հայենասիրության, հավատի, լեզվի սիրո և հարգանքի հիմնական սերմնացանները նրանք են: Ուսումնաճանողական պրակտիկայի շրջափուլերում ուսանողները պետք է կարողանան կուտակել այս պաշարները, որ օգտագործեն ակտիվ գործունեության շրջանում:

Նմանատիպ մոտեցումը նպաստում է վերլուծական մտքի ձևավորմանը:

Ուշադրություն պետք է դարձնել գրավոր աշխատանքներ տալու հմտություններ ձևավորելուն, նախընտրելի են փոխադրությունները, ստեղծագործական փոխադրությունները, շարադրությունները, ինքնաթելադրությունները: Վերջապես, ամենակարևորը, երեխաներին ուսուցանել համացանցից գիտական տեղեկույթ քաղելու հմտություններ, բնականաբար, այդ ճանապարհին սովորեցնելով սովորել:

Իբրև ամփոփում, սույն աշխատանքում փորձեցինք ցույց տալ ուսումնամասնագիտական պրակտիկայի ժամանակ անհրաժեշտ հմտություններից մի քանիսը, մասնավորապես լեզվական թեմատիկ միջոցառումների կազմակերպումը, ինչպես նաև փաթեթների ստեղծելու մեկ-երկու առանձնահատկություններ:

Ի վերջո, հիշենք սովորեցնելը շատ ավելի դժվար է, քան սովորելը:

Ա. Յուզբաշյան

Հայոց լեզվի ուսումնամասնագիտական պրակտիկայի մի քանի առանձնահատկություններ

Ամփոփում

Սույն հոդվածում անդրադարձել ենք մասնագիտական պրակտիկայի ճանաչողական փուլում միջոցառումներ կազմակերպելու հմտություններին, որոնց արդյունքում պրակտիկանտ-մանկավարժները սովորում են երեխաների խմբերի կառավարում, ստեղծագործական աշխատանքներ

կատարելու կարողություններ են ձեռքբերում, ինչպես նաև քերականությունը մտնում է առօրյա կյանք, ինչպես մյուս առարկաները:

А. Юзбашян

Некоторые особенности при прохождении учебной педагогической практике по армянскому языку

Резюме

В статье описаны некоторые особенности при прохождении учебной педагогической практике, в частности при проведении профессиональных мероприятий в ходе которых будущим учителям дает возможность работать с группой учеников. В результате студенты должны обладать необходимыми знаниями, умениями и навыками преподавании армянского языка.

A. Yuzbashyan

Some peculiarities of Armenian Language Teaching Internships

Summary

This scientific article refers to the skills necessary to design academic activities in the cognitive phase of learning. The above mentioned skills enable intern teachers to effectively manage student groups, develop creative thinking as well as integrate grammar into daily lifestyle in line with other subjects.